

ԾԱՆՈԹԱՑԵՔ

ՄԱՐՏԻՆԻ ՀԵՏ

# Հիսուսի հետևորդները Քենիայում

## Ինչպես է Մարտինը հետևում Հիսուսին

Մարտինը հետևում է Հիսուսին՝ սովորելով Նրա մասին: Երբ Մարտինը հանդիպեց միսիոներներին, նրանք նրան մի գրքույկ տվեցին Հիսուս Քրիստոսի մասին: Մարտինը տեսողական խնդիրներ ուներ, ուստի չէր կարողանում կարդալ մանր տառերով գրված բառերը: Սակայն նա ցանկանում էր ավելի շատ բան իմանալ:

Միսիոներները Մարտինին տվեցին Մորմոնի Գրքի մի օրինակ բրայլի գրերով: Բրայլը կույր կամ տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար գրավոր լեզվի ձև է:

Մարտինը որոշեց մկրտվել իր հոր հետ: «Շնորհակալ եմ Հիսուս Քրիստոսի Եկեղեցու համար»,- ասում է Մարտինը: «Ես գիտեմ, որ այն ճշմարիտ է»:



### Դուք նույնպես կարող եք հետևել Հիսուսին



Նշեք որևէ բան, որ դուք արել եք՝ Հիսուսին հետևելու համար: Գրեք և պատմեք մեզ: Դարձերեսի շապիկին կարող եք տեսնել, թե ինչպես անել դա:




### Մարտինի մասին

**ՏԱՐԻՔԸ.** 10 տարեկան

**ԲՆԱԿԱՎԱՅՐԸ.** Նայրոբի (Քենիա)

**ԼԵԶՈՒՆԵՐԸ.** անգլերեն, սուահիլի

**ՆՊԱՏԱԿԸ.** 1) Տարածել Հիսուս Քրիստոսի լույսը: 2) Ծառայել միսիայում: 3) Իրավաբան դառնալ:

**ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.** Շախմատ խաղալ, օգնել հայրիկին հագուստի արտադրության իր բիզնեսում:

**ԸՆՏԱՆԻՔԸ**՝ Մարտինը, հայրիկը, ավագ եղբայրը

### Մարտինի սիրելիները

**ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.** Երբ Նեփիացիների բեռները թեթևացան (տես Մոսիա 24)

**ՏՈՆԸ.** Մաշուջայի օրը (Հերոսների օրը)

**ՄԻՐԳԸ.** Տանձ

**ԳՈՒՅՆԸ.** կապույտ

**ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ.** «Աստծո Զավակն եմ» (Հիմներ և մանկական երգեր, 58)